

Ա. Խ. Մայրապետան

ԹԱՆԿԱՐԺԵՔ եթերԱՅՈՒՂԱՏՈՒ, ԴԵՂԱՏՈՒ ԵՎ ՆԵՐԿԱՏՈՒ ԲՈՒՑՍԵՐԻ Ա-
ՃԵՑՄԱՆ ՀԱՄԱՐՈՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱԳՐՈԲԻՄԻԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ
ԵՎ ՀԻԴՐՈՊՈՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Նկատի ունենալով, որ հիդրոպոնիկա կան տեղակայանքների կառուցումը պահանջում է սկզբանական խոշոր կապիտալ ներդրում, առավել նպատակահարմար է բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում նեցնել բացառապես թանկարժեք ու դեֆիցիտային բույսեր, որոնք զբաղեցնելով համեմատաբար փոքր մակերեսներ, կտան ավելի շոշափելի արդյունքներ:

Ստորև բերվում են մի քանի կարեռ արդյունքներ, որոնք ստացվել են ՀՍՍՀ ԳԱ ագրոբիմիական պրոբեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտում, բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում թանկարժեք իթերայուղատունների, դեղաբույսերի և ներկատունների անհող աճեցման փոքրերում:

Եթերայուղատու բույսեր (1-3, 5-8, 10, 11)

Չնայած այժմ ամբողջ աշխարհում, հատկապես զարգացած պարֆյումերային արդյունաբերություն ունեցող երկրներում, ինչպիսիք են Ֆրանսիան, Ճապոնիան, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը, ՍՍՀՄ-ը, ԱՄՆ-ը և այլն, գնալով լայն թափ է ստանում սինթետիկ բուրումնավետ նյութերի արտադրությունը, սակայն դնական եթերայուղատերի նկատմամբ պահանջարկն անընդհատ աճում է: Եթե ավելացնենք նաև այն հանգամաները, որ գալիք հնգամայակում նախատեսվում է չայաստանում կառուցել խոշոր պարֆյումերային Փարիզական, ապա խնդրի հրատապությունը և կարեռությունը ավելի հիմնավոր կոդառնա: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ յուրաքանչյուր օծանելիքի կոմպոզիցիա ստեղծելու համար պարֆյումերը պետք է իր տրամադրության տակ ունենա առնվազն 10 - 15 տեսակի եթերայուղատեր և նրանց տարրեր բաղադրամասեր, մինչդեռ չայաստանում առ այսօր այդ թանկարժեք բույսերից արտադրուվում է միայն խորդենին:

Վարդաբույր խորդենու (Բօզօյա գերան - *Pelargonium roseum* Willd.) եթերայուղը հանդիսանում է հիմնականում ալիքֆատիկ տերպենային սպիրտաների՝ ցիտրոնելուլի, գերանիուլի և մասամբ լինալուլի խառնուրդ, որը կազմում է նաև վարդի եթերայուղի հիմքը (ոոդինոլ անվամբ), այստեղից և խորդենու վարդաբույր, վարդային անվանումը:

Վարդաբույր խորդենու եթերայուղը մտնում է Սովետական Միությունում արտադրվող մոտ 350 տեսակ օծանելիքների կազմի մեջ: Այն լայնորեն օգտա-

գործվում է կոսմետիկայում, սննդարդյունաբերության և բժշկության մեջ:

Խորդենու անհող արտադրության բազմամյա փորձերն անվիճելի իրեն հաստատել են այդ խփառ աշխատատար ու ծանր դաշտային մշակությթ կիսապտումատ Հիդրոպոնիկական արտադրությամբ փոխարինելու բարձր արդյունավետությունը: Այսպես, օրինակ, հիդրոպոնիկայի պայմաններում արհեստական սննդամեկ հեկտարից ստացվում է 100-120 տոննա վերերկրյա կանաչ զանգված՝ ի տարրերություն ստուգիչ հողամասում ստացվող 20-25 տոննա յի: Նըշենք: Նաև, որ մեր և Լենինգրադի, Սևերնոյե սիյանիյի, պարֆյումերային Փարբեկույթի մասնագետների բազմամյա ուսուումնասիրություններն ապացուցել են, որ բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում ստացված եթերայուղը իր բուրմունքով և ֆիզիկաքիմիական հատկություններով չի զիջում սովորական եղանակով ստացված եթերայուղին:

Կ իտրոնային սորգոն (Лимонное сорго - *Cymbopogon citratus* Stapf) առաջին անգամ Հայաստան ենք բերել 1966թվին՝ Սուխումիի եթերայուղատում մշակությունների փորձակայանից: Այն բազմամյա, արեալարձային եթերայուղատուրույս է, որը մշակում է զնդկաստանում, ինդոնեզիայում, Մալայան կղզիներում և Բրազիլիայում:

Այդ բույսից ստացված եթերայուղը, ցիտրալ ալլեհիդի պարունակության չնորդիվ (մինչեւ 95%), ունի կիտրոնի հաճելի բուրմունք և լայնորեն օգտագործվում է պարֆյումերիայում, սննդարդյունաբերություն և բժշկության մեջ՝ փոխարինելով բնական կիտրոնի թանձրաժեր եթերայուղին:

Տեղաբնակները օգտագործում են կիտրոնային սորգոյի տերեներից պատրաստված թեյ՝ որպես աղեստամբուսային հիմանդրությունների բուժման միջոց, իսկ ջերմով հիմանդրանալիս այդ բույսի տերեներով տաք լոգանք են ընդունում:

Բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում այս նոր մշակութի փորձարկումները նույնպես դրական արդյունք են տվել և ապացուցել կիտրոնային սորգոյի անհող արտադրության բարձր արդյունավետությունը (մեկ հեկտարից ստացվում է 350-400 կգ եթերայուղ):

Կ ատվադաշը (Непета, Котовник-Нерета: *cataria*: L.) եթերայուղատում մշակությունների և եթերայուղերի հայտնի մասնագետների կարծիքով համարվում է վարդարպույր խորդենու հետանկարային մրցակիցը: Այդ բույսի տերեներից և ծաղկաբույրերից ստացված եթերայուղը նույնպես պարունակում է զգացլի քանակ կությամբ (32-51%) խորդենու եթերայուղին հատուկ և այն արժեքավորող առաջանակին սպիրտներ՝ ցիտրոնելլու: գերանիով:

Ր տարրերություն խորդենու, կատվադաղձը դիմաց կուն է, ձմեռում է բացդաշտում և հատուկ ինամ մեք չի պահանջում:

Մեր բազմամյա ուսուումնասիրությունները ցույց են տվել, որ անհող մշակութի դեպքում, մեկ սննդացվող հեկտարից, կարելի է ստանալ կատվադաղձի 43-48 տոննա կանաչ զանգված և 61-75 կգ եթերայուղ:

Վ ետիվերիա (Ветиверия- *Vetiveria zizanioides*: Stapf) հացագրիների ընտանիքին պատկանող բազմամյա արեալարձային բույս է: Նրա հայրենիքը համարվում է Հնդկաստանը: Անհիշելի ժամանակներից հնդիկները վետիվերիայի արմատներից պատրաստում էին բուրումնագետ ջուր և տարրեր օծանելիքներ:

Եթերայուղի հիմնական բաղադրամասերն են α և β վետիվոն կետոնները, վետիվերիային թթուն, բազմաթիվ սեսկվիտերաբնային սծիազրեր և սպիրտներ: Վետիվերիայի եթերայուղն ունի դուրեկան ու կայուն բուրմունք և օգտագործվում է որպես այս այս եթերայուղի փիբուտոր: Կիրառվում է նաև ժո-

Դովրդական բժշկության մեջ, օծանելիքի, օճառի և կոսմետիկական այլ նյութերի արտադրությունում:

Հաշվի առնելով այս եթերայուղի բարձր արժեքը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ մշակույթը Սովետական Միությունում գործնականում չի աճեցվում, 1974թ. սկսած առաջին անգամ ուսումնասիրել ենք այդ թանկարժեք բույսի անհող աճեցման հնարավորությունն ու արդյունավետությունը:

Հետազոտություններից պարզվել է, որ անհող մշակույթի պայմաններում վետիլերիայի արտատիքը և նրանից ստացվող եթերայուղի ելանքը հողային սուլուգիչի համեմատությամբ ավելանում է 3-4 անգամ: Որոշ չափով փոխվում է նաև եթերայուղի քիմիական բաղադրությունը՝ վետիլոն կետոնի պարունակությունն ավելանում է 6-8% ով:

Միայն առողջապահության կորձերը ցույց են տվել, որ բացօթյան հիդրով եթերայուղատու բույս է, որի եթերայուղում պարունակվող բազմաթիվ նյութերի (սանտոնին, ցինեոլ, արտեմիզինակետին և այլն) մեծ պահանջարկ կապարֆյումերիայում երգություն մեջ:

Այս բույսի անհող արտադրության փորձերը ցույց են տվել, որ բացօթյան հիդրով եթերայուղատու բույս է, որի եթերայուղում պարունակվող բազմաթիվ նյութերի (սանտոնին, ցինեոլ, արտեմիզինակետին և այլն) մեծ պահանջարկ կապարֆյումերիայում մեջ:

Այս բույսի անհող արտադրության փորձերը ցույց են տվել, որ բացօթյան հիդրով եթերայուղատու բույս է, որի եթերայուղում պարունակվող բազմաթիվ նյութերի (սանտոնին, ցինեոլ, արտեմիզինակետին և այլն) մեծ պահանջարկ կապարֆյումերիայում մեջ:

Էվգենոլիկ անունը՝ Տազիլիկ (Gratissimum L.) տերեներից եւ ծաղկաբույլերից ստացված եթերայուղը չնորհիվ էվգենուլի բարձր պարունակության (որով եւ պայմանավորված է մեխակին հատուկ ֆենոլի բարձր պարունակությանը) մեծ կիրառություն է գտել պարֆյումերիայում, բժշկության մեջ:

Դեռևս անհիշելի ժամանակներից էվգենուլն ստացել են մեխակի ծառից, որն աճում է Զանգիբարում եւ Մադագասկարում:

Հաշվի առնելով արտասահմանից համեմունքային մեխակի ներմուծման հետ կապված դժվարությունները, խնդիր դրվեց Հայրենական հույսութիւնը բնական մեխակին փոխարինող նյութ ստանալ: Այս խնդիրը վերջներս հաջողությամբ լուծվեց թրիխիսիի սննդարդյունաբերության գիտահետազոտական ինստիտուտում: Բնական մեխակին փոխարինեց էվգենուլային սեհանից ստացված եթերայուղը՝ այն խառնելով տարրեր սննդարդյունաբերի հետ (կերակրի աղ, շաքարի փուչի, բուռական յուղ, կթիլ սպիրտ և այլն):

Էվգենուլային սեհանի անհող արտադրության փորձերը և դրանց զուգորդական բիոբիմիական ու ազգօթյան հետազոտությունները, որոնք կատարվել են վոր բիոբիմիական ու ստացվող մշակույթների փորձակայանի մեր ինստիտուտի և Սովունումիի եթերայուղատու մշակույթների փորձակայանի մասնակիթի ստացված 150-200 կտ թանկարժեք մեկ զեկուար սննդարդյունաբերի հաջողությամբ: Էվգենուլ՝ 78-87% էվգենուլ ֆենոլի պարունակությամբ:

Բացի վերոհիշյալ բույսերից, բացօթյան հիդրոպանիկայի պայմաններում փորձարկված են նաև այլ եթերայուղատուներ՝ անխոն, խորամամիթ, քեմոն, պատճարկվում են առաջնական գործությունների առաջարկություններ:

Այսպիսով, առաջին անգամ՝ կատարված այս ուսումնասիրությունները, մեր կարծիքով, հնարավորություն կտան ստեղծելու թանկարժեք եթերայուղատու կարծիքով, հնարավորություն կտան ստեղծելու թանկարժեք եթերայուղատու մշակույթների արդյունավետ, ինքնամեքենայացված արտադրություն, որը մշակույթների արդյունավետ, ինքնամեքենայացված արտադրություն, որը բույսը կտան ընդլայնելու հայտատառում արտադրվող եթերայուղերի տեսականին:

Զնայած սինթետիկ գեղամիջոցների արտադրության անընդհատ աճին և նրանց լայն կիրառությանը, վերջին տասնամյակներում աննախընթաց մեծ պահանջարկ է նկատվում բուսական բնական գեղամիջոցների նկատմամբ, որի պատճառը պետք է համարել նրանց առավել անվնասակարությունը և հետագա բացասական հետեւանքների բացառումը: Ոխտի, գեղարույսերի արդյունավետության բարձրացման ուղղված հետազոտությունները տարեցտարի ստանում են ավելի մեծ նշանակություն: Այդ նպատակն են հետազնությում մի շարք թանկարժեք գեղաբույսերի անհող անեցման փորձերը, որոնք կատարվում են մեր ինստիտուտում:

Հալվե (Алоэ древовидное—*Aloe arborescens* Mill.), Դեռ հնում հույներին, հռոմեացիներին ու արաբներին հայտնի էր հալվեի բուժիչ հատկությունը: Ժողովրդական բժշկության մեջ հալվեի հյութը օգտագործել են բազմաթիվ բորբոքային և այլ հիվանդություններ բուժելիս:

Հալվեի բուժիչ հատկությունը պայմանավորված է հյութում անտրագլիկոզիլների (հատկապես անտրոպացենի) պարունակությամբ: Բժշկական արդյունաբերությունը հալվեի հյութից թողարկում է չորս մարտեր գեղամիջոցներ, որոնք օգտագործվում են զանազան սեռական հիվանդություններ, մաշկի արյվածքներ, թարախային խոցեր բուժելիս, ինչպես նաև երկրորդային սակավարյունության ժամանակ:

Մինչեւ վերջին տարիները ՍՍՀՄ-ում հալվեի պլանացիաներ կային միայն վրաստանում (Բորովլեթում), որը չէր կարող բավարարել այդ արժեքավոր գեղարույսի օրակուր աճող պահանջը: Ոխտի, ԽՍՀՄ բժշկական արդյունաբերության մինիստրության առաջարկով փորձեր սկսվեցին այդ բույսը անեցնելու նաև շայաստանում՝ ինչպես հողային, այնպես էլ անհող մշակույթի պայմաններում:

Ենք ինստիտուտի բազմամյա հետազոտությունները ցույց են տվել, որ բաց-օթյա և ջերմատնային հիդրոպոնիկայի պայմաններում, մեկ տարվա ընթացքում, հնարավոր է ստանալ հալվեի 100-120 տոննա լավորակ տերեկ՝ սննդավող մեկ հեկտարից, մինչեւ հողային ստուգիչի պայմաններում այն կազմում է 30-40 տոննա:

Պճագավոր մորմ (Паслен долбчатый—*Solanum laciniatum* Ait.): Ժամանակակից բժշկության մեջ լայնորեն կիրառվում են պրեկարատներ կորու-զունը, հիբրոնկորափոնը, պրոպեստերոնը, պրեդնիպոնը և այդ շաբերին պատկա-նող այլ կորտիկոստերոփոններ, որոնք օգտագործվում են ռեմատիզմի, պոլի-արթրիտի, բրոնխիալ ասթմայի, բորբոքային պրոցեսների, մաշկային հիվանդությունների բռնժման համար:

Նշված պրեկարատների ստացման համար հումք է հանդիսանում ստերոիդա-յին գլիկուլարությունը, որն արդյունաբերական բանակներով ստացվում է պեղավոր մորմից:

Այս արժեքավոր բույսի հիդրոպոնիկական եղանակով արտադրությունը հնարավորություն է տալիս մեկ քառ. մ. մակերեսից ստանալ մոտ 12 կտ վերերկրյա թարմ զանգված, որը կարող է տալ մինչեւ 20 գ սոլասորին: Այս ցուցանիշը 3-5 անգամ ավելի բարձր է սովորական հողային ցանքից ստացվածի համեմա-տությամբ:

Գարդագույն կատարանտ (Կատարանտ քազարականացած—*Catharanthus roseus* Undl.): Մոտ 20 տարի առաջ, միջաղաքային գիտագործովներից մեկում, Հունգարիայի, Արևմտյան Գիրմանիայի և Կանադայի մի խումբ գիտնականներ զեկուցեցին վարդագույն կատարանտուսից ստացվող դիմերային ալկալոիդների հակառակության ազդեցության մասին, որը ցնցող նշանակություն ունեցավ:

Ներկայումս ԱՄՆ-ի և Հունգարիայի գեղագործական ֆիրմաները այդ բույ-
սից ստանում են վիճակաստին և վիճակաստին կոչվող գեղամիջոցների, որոնք օգո-
տագործվում են լեյկոների և քաղցկեղի գեմ:

Հաշվի առնելով այս բույսից ստացվող գեղամիջոցների խիստ հեռանկարայ-
նությունը, ինչպես նաև գեղագործական ֆարբիան տեղական հումքով ապահո-
վելու անհրաժեշտությունը, 1972 թ. սկսած ինստիտուտի փորձարարական կայա-
նում սկսվեցին վարդագույն կատարանտուսի անհող աճեցման բարձրմանի
փորձեր՝ հիդրոպոնիկական արտադրության տեխնոլոգիան մշակելու և հումքի
որակը ուսումնասիրելու նպատակով:

Այդ փորձերը ցույց են տվել, որ անհող մշակույթի պայմաններում կատա-
րանտուսի աճում է շատ բուռն և մեկ սնուցվող հեկտարից կարող է տալ մինչեւ
50 շ չոր տերեկ՝ գումարային ալիքալիդների բարձր պարունակությամբ (1,1 %):

Կալանխօս-Կալանխօս (Lam.) Pe) արժեկավոր գե-
ղարույցը Հայաստան է բերված 1977 թվին: Նրա տերեներից ստացվող գեղա-
միջոցները օգտագործվում են վիճարուժության, ակնարուժության և ատամնա-
բուժության բնագավառներում: Կալանխօսի տերեների բջջահյութը պարունա-
կում է կատեխիններ, դարադանյութեր, վիտամիններ և այլ ֆիզիոլոգիակեն ակ-
տիվ միացություններ, որոնցով և պայմանավորված է բույսի կենսարանն կան
ակտիվությունը:

Եռամյա փորձերի արդյունքները վկայում են, որ հիդրոպոնիկական մշակույ-
թի պայմաններում 1 մ² ստացվում է կալանխօսի ավելի քան 10 կգ կանաչ զանգ-
ված, որը գերազանցում է հողային մշակույթին 3-4 անգամ:

1980 թ. կիեկի բակտերիալ պատրաստուկների գործարանի լաբորատորիան վեր-
լուծության ենթարկեց մեր ինստիտուտում արտադրված հումքը: Պարզ եց, որ
հիդրոպոնիկ հումքի մեջ կատեխինի և դարադանյութի պարունակությունը կազ-
մում է 102 մգ %, այն գելքում, երբ պետական ստանդարտով նախատեսված
նվազագույն չափն է 35 մգ%:

Այսպիսով, բացօթյա հիդրոպոնիկան կարող է արդյունավետ և սկզբունքորեն
նոր ճանապարհ բացել Հայաստանում թանկարժեք գեղարուժությունը լսյն արդյու-
նաբերություն ստեղծելու համար:

Ներկատու բույսեր (9)

Հինան (Хна, лавсония неоключая - Lawsonia: inermis L.) մշտակա-
պար թուփ է: Այն որպես ներկարույս ու գեղարույս աճեցվում է իրանում,
Հնդկաստանում, Ֆիլիպինում, Թունիսում, որտեղ նրա թարձրությունը հասնում
է մինչեւ 7 մետրի:

Հինայի տերեները պարունակում են „լավսոնն“, (նաֆտոխինոն) կոչվող ներ-
կանյութի գեղնակարմագուն բյուրեններ, 7-8 % դարադանյութ (տանիին) և
վիտամին K: Շնորհիվ լավսոն ներկանյութի պարունակության, հինայի չոր-
տերեներից պատրաստված փոշին մեծ քանակությամբ օգտագործվում է բրդյա-
և մետաքսյա գործվածքներներ, մազերը կարմրանարնջագույն կում գեղնանարնջա-
գույն ներկելու համար: Որպես այդ պիտին օգտագործվում է նաև բարձրարժեք
գործագործության և նկարչության մեջ: Կա այն կարծիքը, որ հին հայկական
ձեռագրերի նկարագրումներում՝ օգտագործվել է նաև հինա, իսկ հանրահայտ
եղիկոսական մումիֆիների վրա պահպանված են այդ գարմանալի կոյուն ներ-
կի անջնջելի հնարեր:

Հինան արեւելյան բժշկության մեջ օգտագործվում է նաև զանազան մաշկա-

Հին հիվանդություններ (գիաթեզ, էկզեմա) բռնժելիս, ինչպես նաև ծառայում է որպես միջոց գլխացավի և մաղերը թափվելու դեմ: Հինայի ծաղկաբռնջերից ստացվում է վարդի նորոք բռնքով թանկարժեք եթերայուղ (մոտ 0,11% պարունակությամբ), որն օգտագործվում է պարֆյումերիայում:

Ինչպես հայտնի է, Սովորական Միությունում գործնականում հինա չի արտադրվում և այն ներմուծվում է արտասահմանից: Վերջին տարիներին հինայի աճեցման փորձեր են սկսվել Ղրիմում, Տաջիկստանում և Ադրբեյջանում, որոնք սակայն, արտադրական նշանակություն չեն ստացել:

1977-1980 թթ. առաջին անգամ փորձ արվեց հինան աճեցնել Հայաստանում՝ բաց օթյա հիմունիկայի և հողային մշակույթի պայմաններում: Այդ փորձի արդյունքները հումագույղ են և վկայում են, որ Արարատյան դաշտի պայմաններում, մեկ հեկտար արհեստական սնուցվող հիմունիկական մակերեսից, կարելի է ստանալ հինայի 40-60 ց օգաչոր տերեւ:

Բասմա, ինդիգոֆերա կրաসիլյանա՝ *Indigofera tinctoria* L., ընդպավորների ընտանիքին պատկանող միամյա ոչ բարձր թուփի է: Հնուց այն հայտնի է որպես թանկարժեք տեխնիկական, դեկորատիվ, ներկատու և դեղատու բույս: Նրա հայրենիքը համարվում է Հնդկաստանը, սակայն թանկարժեք կապույտ ներկ ստանալու համար այն մշակվում է նաև Խանուում, Ցեղունում, Զինաստանում ձապոնիայում, Եգիպտոսում, Խոտլիայում և այլուր:

Բասմայի տերեւները պարունակում են „ինդիգան“, կոչվող անգույն գլյուկոզիտը, որը ֆերմենտների, թթուների և հիմքերի ազդեցությունից տարրալուծվում է ու փոխարկվում կապույտ ինդիգոյի՝ հազվագյուտ ու շատ կայուն ներկանյութի, որն օգտագործում են նկարչության, գորգագործության և տեքըստիլ արդյունաբերության մեջ:

Բասմայի և հինայի փոշին միասին կիրառելիս մաղերը սկզբու դույն են ստանակում: Տարբեր երկրներում բասմայի տերեւներից պատրաստված ջրային քաշվածը օգտագործվում է նաև ժողովրդական բժշկության մեջ՝ նյարդային, մաշտակային, լյարդի և այլ հիվանդություններ բուժելիս:

Այս թանկարժեք բույսի անհող աճեցման առաջին փորձերը, որոնք նույնպես սկսվել են 1977 թ., առել են խոստումնալից արդյունքներ: Օրինակ, պարզվել է յոր մեկ հեկտար հիմունիկական մակերեսից կարելի է ստանալ 30-40 ց պարսկական բասմայի բարձրորակ օգաչոր տերեւ:

Այսպիսով, Հայաստանում հինայի ու բասմայի ինչպես անհող, այնպես էլ հողային մշակույթի պայմաններում աճեցնելու առաջին անգամ կատարված փորձը պասկվել է հաջողությամբ: Հետազոտական աշխատանքների երկրորդ փուլը, որն ընդունվում է ավելի ամյա ծրագիր՝ այդ բույսերի ֆիզիոլոգա-ազրոքի-միական և հատկապես բիոքիմիական առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ, արդեն սկսված է: Մեր կարծիքով, այդ հետազոտությունների հաջող ավարտը կարող է ունենալ ինչպես տեսական հետաքրքրություն, այնպես էլ կիրառական նշանակություն և կնպաստի մեր հանրապետությունն այդ թանակարժեք ներկարակությունով ու դեղաբույսերով ապահովելու ինդրի լուծմանը:

С. Х. Майрапетян

КРАТКИЕ РЕЗУЛЬТАТЫ ВЫРАЩИВАНИЯ ЦЕННЫХ ЭФИРО-
МАСЛИЧНЫХ, ЛЕКАРСТВЕННЫХ И КРАСИЛЬНЫХ РАС-
ТЕНИЙ В ИНСТИТУТЕ АГРОХИМИЧЕСКИХ ПРОБЛЕМ И
ГИДРОПОНИКИ АН АрмССР

Резюме

В статье приводятся краткие обобщенные результаты опытов по беспочвенному выращиванию ценных эфироносов, лекарственных и красильных растений, гидропоническое производство которых является новым промышленным способом многократного увеличения количества ценного растительного сырья.

Многолетней работой сотрудников института установлена возможность, эффективность и большая перспективность перевода этих культур на новый биотехнологический режим производства в условиях открытой и тепличной гидропоники на площадях, неиспользуемых в сельском хозяйстве.

S. Kh. Mairapetyan

SOME RESULTS IN GROWING VALUABLE ESSENTIAL OIL-BEARING,
MEDICINAL AND DYE-BEARING PLANTS AT THE INSTITUTE OF
AGROCHEMICAL PROBLEMS AND HYDROPONICS OF THE
ARMENIAN ACADEMY OF SCIENCES

Summary

The hydroponic way of growing valuable essential oil-bearing, medicinal and dye-bearing plants has shown to be a new industrial and very efficient method for the multiple production of valuable vegetable raw material. This gives the possibility of establishing new hydroponic installations in areas not used by conventional agriculture, for the large-scale production of those plants.

Л И Т Е Р А Т У Р А

1 Давтян Г. С., Майрапетян С. Х. Производство розовой герани в условиях открытой гидропоники. Журн. "Агрохимия", Изд-во АН СССР, № 4, 1970, с. 96-101.

2 Давтян Г. С., Майрапетян С. Х. Производство розовой герани без почвы. Ереван, Изд-во АН АрмССР, 1976, с. 1-134.

3 Давтян Г. С., Майрапетян С. Х. Результаты многолетних опытов по производству розовой герани без почвы в условиях открытой гидропоники. "Сообщения Института агрохимических проблем и гидропоники АН АрмССР," № 18, 1979, с. 3-15.

4 Давтян Г. С., Бабаханян М. А. Продуктивность лекарственных растений в условиях открытой гидропоники. "Сообщения Института агрохимических проблем и гидропоники АН АрмССР", № 18, 1979, с. 22-25.

5 Майрапетян С. Х. Эффективность производства лимонного кориго в условиях открытой гидропоники. "Сообщения Института агрохимических проблем и гидропоники АН АрмССР", № 18, 1979, с. 15-22.

6 Майрапетян С. Х. Возможность и эффективность выращивания ветиверии в условиях открытой гидропоники. "Сообщения Института агрохимических проблем и гидропоники АН АрмССР", № 20, 1980, с. 156-162.

7 Майрапетян С. Х. Производство эфиромасличных культур в условиях открытой гидропоники. 3-й Всесоюзный симпозиум: "Актуальные вопросы изучения и использования эфиромасличных растений и эфирных масел". Симферополь, 1980, с. 156-157.

8 Майрапетян С. Х., Овсепян А. А. Продуктивность базилика евгенольного в условиях открытой гидропоники. "Парфюмерно-косметическая и эфиромасличная промышленность", М., Изд-во ЦНИИТЭИ пищепрома, № 2, 1980, с. 7-10.

9 Майрапетян С. Х. Хна и басма в Армении. "Биологический журнал Армении", Изд-во АН АрмССР, т. XXXII, № 12, 1979, с. 12

10 Davtyan G. S., Mairapetyan S. Kh. Proceedings of the III Congress of IWOSC, Wageningen, the Netherlands, 1973, p. 157-163.

11 Mairapetyan S. Kh. Productivity and quality of the essential oil of ordinary basil grown under open-air hydroponic conditions. Chemical Abstracts Service, CA Selects, Flavors and Fragrances, Issue 1, January 14, 1980, p. 3.